ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻԹԱԿ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻԹԱԿԻ ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻԹԱԿԻ ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻԹԱԿ

Ե. Պօղոս, Տոհմ. 24/3 Նոր.

ՂԵՂՎԱԺՎՎԾ ԿՈՄՈՂ

Խոհեմ, . . . ժիւեռմրոյ

Ձեր ժամանակ հարցը հետաքրքրում է ամենքին, որովհետև ամենքն էլ ուզում են իմանալ, թե ինչ է լինելու Ղարաբաղի ճակատագիրը։ Ես էլ ուզում եմ ասել իմ կարծիքը, բայց ոչ թե որպես մասնագետ, այլ որպես մի պարզ մարդ, որ ամեն օր կարդում է թերթերը, լսում է տարբեր մարդկանց խոսակցությունները և ինքն էլ մտածում է։

Ղարաբաղի հարցը ներկայացնում է երկու կողմ։ Մի կողմից՝ Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը, որ ուզում է միանալ Հայաստանին, մյուս կողմից՝ Ադրբեջանի կառավարությունը, որ ուզում է, որ Ղարաբաղը մնա իր կազմում։ Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը ուզում է միանալ Հայաստանին, որովհետև նա տեսնում է, որ Ադրբեջանի կառավարությունը ոչ մի կերպ չի կարողանում կարգ ու կանոն հաստատել Ղարաբաղում։ Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը տեսնում է, որ Ադրբեջանի կառավարությունը ոչ մի կերպ չի կարողանում պաշտպանել Ղարաբաղի հայ ազգաբնակչությանը թուրք ավազակների հարձակումներից։ Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը տեսնում է, որ Ադրբեջանի կառավարությունը ոչ մի կերպ չի կարողանում ապահովել Ղարաբաղի հայ ազգաբնակչության տնտեսական կյանքը։ Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը տեսնում է, որ Ադրբեջանի կառավարությունը ոչ մի կերպ չի կարողանում ապահովել Ղարաբաղի հայ ազգաբնակչության մշակութային կյանքը։ Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը տեսնում է, որ Ադրբեջանի կառավարությունը ոչ մի կերպ չի կարողանում ապահովել Ղարաբաղի հայ ազգաբնակչության քաղաքական կյանքը։ Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը տեսնում է, որ Ադրբեջանի կառավարությունը ոչ մի կերպ չի կարողանում ապահովել Ղարաբաղի հայ ազգաբնակչության կրոնական կյանքը։ Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը տեսնում է, որ Ադրբեջանի կառավարությունը ոչ մի կերպ չի կարողանում ապահովել Ղարաբաղի հայ ազգաբնակչության ազգային կյանքը։ Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը տեսնում է, որ Ադրբեջանի կառավարությունը ոչ մի կերպ չի կարողանում ապահովել Ղարաբաղի հայ ազգաբնակչության ամեն տեսակ

եօք մոքին չանցուներ թէ ամենէն աղտու բարեկարգութիւնն որ կրնայ ընել իր տերութեան դատարաններուն և ոստիկաններուն համար, անոնց թուականներն ամէն ամսու գլուխ վճարելն է. ենթադրենք թէ չգիտեր, արդեօք Եպարքոս մը կամ գանձուց պաշտօնեայ մը չկո՞յ որ այս բանը հասկցունէ։ Պաշտօնեայ մը, դատաւոր մը կամ ոստիկան մը երբ ամսական չոտանար և ապառիկ կը ծառայէ, շատ անգամ իր ատենալու ամսականին քառորդը ստանալու յուսով, կընա՞յ ըլլալ որ բարեկարգութիւն ըլլայ այդպիսի տերութեան մէջ. երբ անոր ծառայողները անօթի ծաթաւ, ստիպուած անգործութենէ ապառիկ կաչխատին, հարկաւ ապրելու համար իրենց յանձնուած պաշտօնը պիտի ծախեն թէ՛ աժան և թէ՛ սուղ վճարողին։

Տաճկահայաստանէն եկած լուրերը սարսափելի բաներ են. նամակներն իրարու կը յաջորդեն Պատրիարքարանը. «Արեւելք»ի էջերը լեցուն են աւազակութեանց և մարդասպանութեանց լուրերով և այնպիսիներ կան որ մարդուս վրայ սարսուռ կը բերեն կարդալու ատեն. կարծես թէ այդ աւազակներուն մտանաւոր պատուէրները են տրուած այդ չարագործութիւնները կատարելու համար։ Տասերեք Հայեր Կարսի և Ալաշկերտի ճամբուն վրայ, բաղմաթիւ դիմուած Քիւրտերու ձեռքով կը կողոպտուին. բայց որովհետեւ ամենուն ճանչցած Քիւրտերն են եղեր և կրնայ ըլլալ որ մատնուին, ատ պատճառով ոչխարի պէս տասերեք Հայերն ալ կը մորթեն և փոսի մը մէջ անոնց դիակները կը թաղեն։ Քանի մ'օր գաղտուկ կը մնայ ատ անլուր չարագործութիւն, բայց վերջապէս կը լսուի. գեղացիին մէկը մորթուածներուն մէկուն ձեռքը հողէն դուրս մնացած կը տեսնայ և վախով գողով ամենուն կխմայուելէ, որ կերթան ատ ձեռքի տերը հողէն հանելու. բայց ի՛նչ կը տեսնեն, փոսը դիակներով լեցուն, մէկուն գլուխը, միւսին ձեռքը կըտրած, մէկալին փորը պատռուած։ Վերջապէս ամենը մէկէն սայլերու մէջ դրած վաղարշակերտ կը տանին քննութեան ենթարկելու և կուսակալը ձիաւոր ոստիկաններ կը հանէ մարդասպանները փնտռելու համար (պէտք է ըսել թէ անոնց խմացնելու համար որ բանը լսուեցաւ, փախէ՛ք)։ Ահա՛, ... խմբագիրը, մեր Տաճկահայաստանի վիճակը այսօր ո՛ւր է հասած, ըստ մեր լրագիրներու՝ լուսամիտ, արդարասէր, ողորմած, բարերար, աչալուրջ Սուլթան Համիտի և իրեն նման պաշտօնեայներուն կառավարութեան առենը։ Օ. Ֆ.

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԷՆ

Վան, Հոկտ. 20/1 Նոյ. 1887

Քաղքիս Եաղմաղուեան Խաչիկ անուն անձն ի Մաշկատակ գիւղ իւր ունեցած տան մէջ իրեն համախոհ քրիստոնեայ Տիմոթէոս որոնք հարսին նման սպիտակ հագուած էին. երկուքն ալ սեւ սեւ աչքերով դեղանի օրիորդներ։

«Փեսան, պ. Դէորդ Պուկտեան, նոյնպէս կատարեալ Հայի կերպարանք ունի. չորս տարի է որ ամերիկեան պղեստանի հագած է, փեսային օգնականն էլ Քիւրմրէ Տիմեան։

«Սրահը լի էր ամուսնացողների բարեկամներէն 200ի չափ հրաւիրեալներով որոյմէ չատեր Հայկական ընկերութենէն անդամներ էին, որոնք իրենց հայրենակիցներն պատուած էին հոն։

«Առաջին սենեակէն քաղցրալուր մի երգի ձայն լսուելով մեծ սրահը մտան հարսանեկան թափորը որի առջևէն կը քալէին փեսան և իր օգնականը, անոնց ետևէն հարսին երկու օգնականները որոց կը հետեւէր հարսը. հարսին և տեսնէն կուզային իր ծնողներ և վերջապէս իր երկու քոյրեր և եղբայրը։ Երբ պատհէն ներս մտան, փեսան և իր օգնականներ անցան ձախ կողմը և նոտան հանդիսականներուն դիմացը, մինչդեռ հարսը իր 2 օգնականներուն հետ որոնք իր քովերէն կը քալէին, գնաց ալ կողմը դանուող աթոռներուն վրայ նստաւ. հարսին ընտանիքն ալ կարգով նստան քովընտի մէկ կողմ։

«Հարսին երկու օգնական օրիորդներն ոտքի ելան և մի երգ երգեցին հայերէն լեզուով. այնուհետեւ, երեցը, պատուելի Ճէնանեան, իր առջեւ կանչեց երկու նշանածներն. հարսին ծնողներն ալ ու ձախ կողմերէն բռնեցին հարսին բազուկներն որ ոտքի վրայ ելնէ և փեսային մօտեցունելով յանձնեցին անոր ձեռքը։ Հարսին քոյրը կը կենար անոր ալ կողմ։

«Կրօնական արարողութիւնը անշուշտ կատարուեցաւ բոլորովին հայերէն լեզուով, բայց եպիսկոպոսական բազմաքանների արարողութեան նման էր։

«Երբ կրօնական արարողութիւնը վերջացաւ, նորէն հարսն ու փեսային նստան հանդիսականներուն դիմացը, բայց այս անգամ քով քովի։

«Ա.յն միջոցին որ հարսը անչարժ դէմքով և անվհեր կերպով կը դիմադրէր իրեն ուղղուած 200 ղոյգ աչքերի նայուածքներուն, Տիկին Աննա Սարաֆեան ոտքի ելաւ և մի ճառ խօսեցաւ «Հայկական Միութեան» վրայ։ Ա.յնուհետեւ ըմպելիքներ բաժնուեցան, երգեր երգեցին և բաւական խօսակցութիւններէ և մի քիչ ալ հայկական նաղաններէ յետոյ, օրիորդներն ու պատանիներն վերադարձան իրենց տուները։»

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Երեսփոխանական ժողովին մէջ կուսակցութիւնները դարձեալ սաստկապէս դրգռուած են իրար դէմ։ Հանրապետութեան նախագահի փեսային պ. Վիլսօնի նկատմամբ երեւան ելած գայթակղեցուցիչ դէպքերն առիթ տուին յարձակուիլներ անելու նախարարութեան և մինչեւ իսկ Հանրապետութեան ամենաբարձր ներկայացուցչին՝ պ. Կրեվիի վրայ։

Երեսփոխանական ժողովի չաբաթ օրի նստին մէջ նախարարապետ պ. Բուվիէ հրաժարական տուաւ։

Մայրայեղ-ձախակողմեանների պետ պ. Ֆլեմանսօ հարցում ուղղեց նախարարութեան, Ֆրանսայի ներքին քաղաքականութեան նկատմամբ, յիշեցունելով վերջին օրերի երեւան ելած գայթակղական դէպքերն, կառավարական խառնաշփոթ վիճակն, ոստիկանութեան և դատական նախարարութեան մէջ ծագած վէճերն վէմսօնեան և Տիկին Լիմուզէնեան դատին առիթով ևայլն, և բացատրութիւն պահանջեց կառավարութենէն։ Նախարարապետ պ. Բուվիէ պատասխանեց թէ պետութեան արժէթղթերուն 0/0ին 3 տոկոսով թղթերի վերածման գործողութիւնը կը կատարուի այժմ, ուստի չուղէր անմիջապէս պատասխանել պ. Ֆլեմանսօի հարցման, այլ նոյ. 23էն յետոյ, այսինքն մինչեւ այդ արժէթղթերի վերածման գործողութեան լրանալը. հակառակ պարագայի մէջ, նախարարութիւնը հրաժարական կուտայ, որպէս զի այդ վիճաբանութեան պատճառով Թրանսաի գանձին լինելիք ճշտութերի պատասխանատուութենէն ազատ լինի։ պ. Ֆլեմանսօ պատասխանեց թէ խընդիրը արդէն երեսփ. ժողովի բեմն ելած լինելով, աւելորդ կը լիներ ծածկել. արժէթղթի տէրերն մինչեւ նոյ. 23 ալ հանգիստ չեն քնանար։ Խնդիրը քուէի դրուելով, 242ի դէմ 328 քուէով մերժուեցաւ նախարարութեան արած առաջարկը վիճաբանութիւնը յետաձգելու համար։

Նոր նախարարութիւն դեռ չէ կազմուած։ պ. Կրեվի խորհրդակցութեան համար պալատ հրաւիրեց մի քանի նշանաւոր երեսփոխանները որոց մէջ և պ. Ֆլեմանսօն։ Ասոնք զգացուցին որ արդի վիճակին մէջ Հանրապետութեան շահը կը պահանջէ որ պ. Կրեվին ալ հրաժարական տայ։ պ. Կրեվին յայտնեց իրենց թէ ինք պատրաստ է հրաժարական տալ եթէ Հանրապետութեան կուսակցութիւնները միանան իրեն յաջորդելիք անձի անուան վրայ և գործերն օրինաւոր ընթացքի մէջ մտնեն. բայց այժմ չուզեր հրաժարած լինել լրագիրներուն աղմուկովը և մի քանի երեսփոխաններուն ճնշման տակ։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Ա.յն երկու անձերը որոնք Պէրլինի փողոցներէն Զարին անցած ժամանակ խնդրագիր նետեցին անոր կառքին մէջ, Վարշաւէն փախած Բոլոնիացիներ են եղեր որոնք ներում կը խնդրէին իրենց հայրենիք վերադառնալ կարենալու համար։ Ա.յդ երկու անձերը նոյն երեկոյ բանտէն արձակուած են։

—Սոֆիայի մէջ մեծ եռանդով կատարեր են Սլիվնիձայի ճակատամարտի տարեդարձի հանդէսը։ Ֆերտինանտ իշխանը խնճոյքին մէջ բաժակ առաջարկեր է Պաթէնպէրկի Ալեքսանդր

իշխանի կենացը որին յետոյ ղրկեր է նաեւ չնորհաւորական մի հեռագիր։

—Լոնտոնէն կը հեռագրեն որ Իրլանտական ընկերութիւնների անդամներէն 15,000 անձ հաւաքուելով Հայտ–Բարքի մէջ մի միթինկ գումարած են ուր մի քանի ճառախօսութիւններ լինելէ յետոյ, Օ'Պրիէն երեսփոխանի ձերբակալուելուն դէմ բողոքելու մի օրակարգ քուէարկած են։ Նոյն օր Թրաֆալկար–Սքուար լինելիք մեծ ցոյցը չէ կատարուած, ոստիկանութեան կատարած խիստ հսկողութիւններին պատճառով։

—Վիէննայէն նոյ. 19ին կըհեռագրեն թէ Պուլկար կառավարութիւնը սերպիական գործակատարի տանը մէջ խուզարկութիւն անել տուած է ի Սոֆիա, գործակատարը ձերբակալած և թուղթերը գրաւած է։ Սերպ կառավարութիւնը բացատրութիւն խնդրած է այս գործի համար։ Օտարականներին արգիլուած է այժմ Սոֆիա մտնել։

Եթէ չափազանցութիւն չկայ այս հեռագրի մէջ, Պուլկար կառավարութիւնը բաւական ծանր պատճառներ ունեցած լինելու է մի այդպիսի գործողութեան համար։

—Հարկ չէ ծացած որ Պիսմարք իշխան Սան–Րեմօ երթայ Ալմանիայի գահաժառանգ իշխանի տեսութեան։ Ա յս վերջինի հիւանդութիւնը սկսած է մեղմանալ այժմ։

—Պէրլինէն կըհեռագրեն որ Զարը լաւ ընդունելութիւն արած է Պիսմարք իշխանին երբ սա իրեն այցելած է ռուսական դեսպանատունը։ Կըսուի թէ տեսակցութեան մէջ քաղաքական խնդիրների վրայ խօսուած ժամանակ, Զարը հաստատապէս յայտներ է իր դիտաւորութիւն խաղաղութիւնը պահպանելու համար։

Կը պատմուի թէ կայսերական պալատը Զարին ճաշ տրուած ժամանակ, Զարը խմացուցած է Պիսմարք իշխանին որ կուզէ իր կենաց խմել։ Իշխանը այդ խմացածին պէս ոտքի ելնելով և դէպի Զարը խոնարհելով պարպեր է իր բաժակ։

Հայրենասիրական հրատարակութիւններ

Արմէնիայի խմբագրատունը ծախու կը գտնուին հետեւեալ ժամանագին վէպիկները, որոնք Պետերբուրգ տպագրուած են, յատկապէս հայ ժողովրդին մէջ անձնապաշտպանութեան և հայրենասիրութեան գաղափարներն տարածելու նպատակով։

1. Ռուիլի գերեզմանի վրայ առաջց արտասուքի եօ լայց լիճուռմ։ (Նիւթը առնուած է Հայերի կրած հարատահարութիւններէն Տաճկահայաստանի մէջ, վաչխատու հայ հարուստներուն և զաղրաթող ու բարբարոս գայմագամներուն ձեռքէն)։ Գինն է 20 մեդ.

2. Բուլղար ապազակապետ։ (Քրիստոնեաներուն հանգստութեանը համար Թիւրքիոյ ստորագրած գաշնագիրներէն մեռած առաջ լինելը ցոյց կուտայ։ կը նկարագրէ մի մահմետական գաղտնութեան գըհ եղած մի բուլղար ընտանիքի սրտաճմլիկ դրութիւնը և վրիժառութեան համար գործնական միջոցներ ցոյց կուտայ)։ 20 մեդ.

3. Ժաննա տ'Արք—Գաղղիական ազատող (Ետաերին յայտնի է այս մանկամարդ հովուհուն, այս գիւղացի աղջկան հայրենասիրական եռանդը որով մի խումբ մարդիկ գլուխը ժողված, հինանալի յաղթութիւններ տարաւ Անգլիացիներին դէմ երբ ատենք ամեն կողմէ ճնշած և նեղը ձգած էին Ֆրանսան)։ 15 մեդ.

4. Նեղա — Տատիս պատմածը (Նիւթը առնուած է Թիւրքերի տիրապետութեան ժամանակ Պուլկարիոյ մէջ Տէլիպաշներին արած բարբարոսութիւններէն)։ 20 մեդ.

5. Դօնչօ — Բուլղար ապազակապետի պատմածը (Հարստահարուած հայրենիքի վրէժն առնելու համար՝ կնոջ մանակցութեամբ կազմուած մի ազգային խմբի գործերն կը պատմէ)։ 20 մեդ.

Վերոգրեալ տետրակներն կը ղրկուին իրենց առջեւ նշանակուած գիներով, փոստի ծախքը Արմէնիայի խմբագրութենէն վճարուելով։ Ով որ 20 տետրակ գնէ մէկ անգամէն, այսինքն չորս օրինակ իւրաքանչիւր տետրակէն, %ին 12 ղեզչ կանէնք վերոգրեալ գներին վրայ, այսինքն կը ստանանք 20 տետրակին համար 3 ֆր. և 35 սանդիմ, փոխանակ 3 ֆր. և 80 սանդիմի։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ դիրք չղրկուիր։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Արմէնիայի խմբագրատունը ծախու կը գտնուին հետեւեալ գիրքերն որոնք իրենց առջեւ նշանակուած գիներով կը ղրկուին ուղղողներին, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։ Մուակը կանխիկ չվճարուած դիրք չղրկուիր։ Կարելի է ստակ ղրկել մանաւանդ–փոստով կամ ֆրանսական նամակադրոշմներով (timbres-poste)։ Նոյնպէս և ամերիկեան տոլար թղթադրամով (1 տոլարը 5 ֆրանգի հաշուով)։

1. ՐԱՖՖԻ—ԿԱՑԾԵՐ. Ա և Բ հատորներ։

Աղգային վիպագիրը Պրն. Րաֆֆիի գործերին մէջ առաջին տեղը կը գրաւեն ԿԱՑԾԵՐը։ Այս գիրք կը ծանօթացունէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի ընտանեաց ցեղերի և հայերի դրութեան, վարքի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուղղողներն։ Մի խօսքով, թէ՛ իբր ազգային ընտիր վիպասանութիւն և թէ՛ իբր հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գտնուի այս գիրք ամեն հայրենասէր Հայի տունն։

Գինն Ա հատորին 7 ֆր. Բ հատորին 8 ֆր. և 50 սանթիմ։ Երկու հատորներն միասին գնողին 15 ֆր.։

2. ՐԱՖՖԻ—ՓՈՒՆՋ. Ա և Բ հատորներ (Ա. հատորը կը պարունակէ Րաֆֆիի ոտանաւոր բանաստեղծութիւններն և Բ հատորն իւր գրած մի քանի վէպերն)։ Երկու հատորներն միասին 10 ֆր. և 50 սանթիմ։

4. ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ — ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. (Ազգային առաջնակարգ բանաստեղծ Ռ. Պատկանեանցի ազատաչունչ և հրահանգիչ բանաստեղծութիւններն կը պարունակէ. ակիզբն գրուած է հեղինակին պատկերը)։ 2 ֆր.

5. ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ—ԱԶԱՏ ԵՐԳԵՐ. (Գամառ–Քաթիպայի «բանաստեղծութիւններ»էն Ազատ երգերի մասը առանձին տետրակով տպագրուած), 20 սանթիմ։

6. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ — ՎԱՆԴՈՑԺ. (Ամեն. Խրիմեան Սրբազանի գրած սրտաշարժ, խրատական և աղատասիրական տետրակը 1876ի վ.ամէն հրդեհին նկատմամբ)։ 70 սանթիմ։

7. Գ. ԱԲՈՎԵԱՆՑ — ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. (Ամեն Հայի համար անհրաժեշտ պարտք է իմանալ իւր ազգի պատմութիւնը, գիտնալ թէ ի՛նչպէս սկսեր է իւր ազգ, ո՛րտեղ ունեցեր է իւր հայրենիք, ի՛նչպէս եկեր հասեր է մեր օրերը, ո՛րանք եղած են իւր երջանկութեան և իւր թշուառութեան պատճառները և այլն։ Գէորգ Աբովեանց որ Տփղիսի Ներսիսեան վարժարանին մէջ Հայոց պատմութեան ուսուցիչ էր և որ յանկարծ մի օր, չգիտցուիր ինչ կերպով, անյայտացած է, իւր աւանդած դասերի համառօտութիւնը գրի վրայ ամփոփած և թողած էր։ Ա յդ «Համառօտութիւն Հայոց ազգի պատմութեան»ը որ մինչեւ այժմ երրորդ տպագրութեան արժանացած է, ի սկզբան կուտայ տեղեկութիւններ Հայաստանի հին աշխարհագրութեան վերաբերեալ և պատմութիւնն ալ այնպիսի ոճով կանէ որ չներկայացուներ միայն թագաւորների կռիւներ, այլ և կը պատկերացունէ հայ ժողովրդի վիճակը)։ 2 ֆր.

8. ԳԱԲՐԻԷԼ ԵՊ. ԱՅՎԱԶԵԱՆ — ՆիԿՈԼ. ԵՊԻՍԿՈՊՈՍ (Պատմութիւն դարձեալ Հայկազանց Լեհաստանի ի կաթոլիկութիւն)։ 1 ֆրանգ

9. ԳԱԲՐԻԷԼ ԵՊ. ԱՅՎԱԶԵԱՆԻ գրած ԼՍԱՐԱՆ անուն հետեւեալ տետրակներն որոնք հոգեշահ պատմութիւններ և օգտակար տեղեկութիւններ կուտան, կը ծախսուին իւրաքանչիւրը 35 սանթիմ

Ա. Պատմութիւն վարուց Մեծին Ներսէսի Հայրապետին մերոյ։

Բ. Եգիպտոսի հետութիւնները։

10. Ա. ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ — ՀԱՅՐԵՆՆԱԴԻՏՈՒԹԻՒՆ. (Պատկերազարդ ճառնարկ աշխարհագրութեան). 2 ֆր.

11. ԵԶՆԻԿ ՔՀՆՅ. ԵՐԶՆԿԵԱՆՑ — ՁԱՅՆԱԴՐԵԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ Հայ գպրոցների համար (Արժ. Տ. եզնիկ քահանայ որ հայկական ձայնագրութեան ուսուցիչ է Տփղիսի Ներսիսեան վարժարանին, 172 երեսներէ բաղկացած այս երգարանի մէջ ժողոված և հրատարակած է ազգային 104 երգեր, անոնց եղանակներն ալ ձայնագրելով հայկական խազերով)։ 2 ֆր. 80 սանթիմ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՅ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Եւրոպաի մէջ բնակած մի Հայի Հայաստանի վրայ արած խորհրդածութիւններով կը սկսի և մի Անգլիացու բերնով կը պատմէ երեւանցի մի հայ ազգական հաստատամտութիւնը մահմետական կրօնը չընդունելու և իր հայ նշանածի հաւատարիմ մնալու համար), 50 սանթիմ.

Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻ (Հայ գիւղացիների բուն վիճակը որ չատերին անծանօթ մնացած է, ուսումնասիրելու պէտքը կը ներկայացունէ), 20 սանթիմ.

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ (Հայաստանի աղատութեան ցանկացող մի Հայի մաղթանքներն և մտածումներն են Սաղմոսի ոճով գրուած), 40 սանթիմ։

ԼԵՒՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆԻ ՊԱՏԿԵՐը

Կիլիկիոյ վերջին թագաւոր Լեւոն Լուսինեանի որ կը հանգչի Փարիզ ի Սէն–Տընի Կեղեսալինեանց վանքին մէջ, չիրմին պատկերը կը գտնուի «Արմենիա»ի խմբագրատունը։ Շիրմին վրայ կայ, տապանագիրէն զատ, և Լեւոն Թագաւորի արձանը։

Պատկերի գինն է 60 սանթիմ։ Խմբագրութիւնն կը վճարէ փոստի ծախքը։

ՀԱՅՔ եւ ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՏԱՐՆԵՐի ԱԶԲՈՒՄ

ՓՈՐՁի խմբագրապետ Մեծ. Պրն. Աբգար Յովհաննէսեանի կարգացած մի հրապարակական դասախօսութիւնն է Հայկական խնդրին նկատմամբ Թիֆլիսի ժողովարանին մէջ 1879 թ. մայիսի 17ին։ Կը ներկայացունէ Եւրոպացիներուն նկատողութիւնները Հայերի մասին և կը նկարագրէ Լոնտոնի Անգլօ–Հայկական Մանաժողովի տրած միթինկը 1878 յուլիսին, Հայկական խնդրին համար։ Կը ծախուի «Արմենիա»ի խմբագրատունն։ Գինն է 1 ֆր., փոստի ծախքը մեր վրայ։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՑԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER
rue Vacon 50.